



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

“ 14 ” 10 2014թ.

№ 148 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՍԵՌԻ
ՀԱՏԿԱՆԻՇՈՎ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 3-ի նիստի N13 արձանագրային որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետի, որոշում եմ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի սեռի հատկանիշով բռնության կանխարգելման 2015 թվականին իրականացվելիք միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովին՝ ապահովել նախատեսված միջոցառումների իրականացումը և համապատասխան տեղեկատվության տրամադրումը:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել այդ որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ս.ԽԱԶԱՏՐՅԱՆ

2014թ. հոկտեմբերի 14
ք. Կապան



Հավելված

ՀՀ Սյունիքի մարզպետի

2014թ. հոկտեմբերի 14-ի

№148-Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

ՀՀ Սյունիքի մարզում սեռի հատկանիշով բռնության կանխարգելման 2015 թվականի միջոցառումների

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Այնպիսի արդյունքները	Կատարողը	Համակատարողը	Ժամկետը
1	2	3	4	5	6
1.	<p>Ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության, նրանց տրամադրվող ծառայությունների քաղաքականության ու այդ ծառայությունների առավել արդյունավետ կազմակերպմանն ուղղված միջոցառումների իրականացում:</p>	<p>1.2 Սյունիքի մարզում կիրականացվեն սեռի հատկանիշով բռնության կանխարգելման նպատակային ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման մշտադիտարկման, գնահատման, հեռանկարային ծրագրերի նախանշման աշխատանքներ</p>	<p>Մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժին</p>	<p>«Կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ Ոստիկանություն</p>	<p>1-ն եռամսյակ</p>
2.	<p>Ընտանեկան բռնության</p>	<p>2.1 Սյունիքի մարզում</p>	<p>Մարզպետար</p>	<p>Ոստիկանություն</p>	<p>Տարվա</p>

	<p>Ենթադրված անձանց ծառայությունների տրամադրմանն ուղղված միջոցառումների իրականացում</p>	<p>Կիրականացվեն ընտանեկան բռնության ենթադրված անձանց բացահայտման , ուղղորդման աշխատանքներ և կկազմակերպվի նրանց համապատասխան աջակցության տրամադրում</p>	<p>անի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժին</p>	<p>Համայնքներ</p>	<p>ընթացքում</p>
3	<p>Հասարակությունում սեռի հատկանիշով բռնության երևույթի կանխարգելմանը, բռնության երևույթի հանրեցյ անհանդուրժողականության միջավայրի ձևավորմանը, սեռի հատկանիշով բռնությանը նպաստող կարծրատիպերի վերացմանը և սեռի հատկանիշով բռնության մասին իրազեկման բարձրացմանը, տեղեկատվական և մեթոդական աջակցությանն ուղղված միջոցառումների իրականացում</p>	<p>3.1 Սյունիքի մարզում կնշակվեն ընտանեկան բռնության դեմ պայքարի թեմաներով տեղեկատվական նյութեր և կտեղադրվեն տեղական լրատվամիջոցներին</p>	<p>Մարզպետարանի աշխատակազմի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին</p>	<p>ՀՀ Կանանց ռեսուրս կենտրոն >> ՀԿ Տեղական լրատվամիջոցներ</p>	<p>2-րդ եռամսյակ</p>
		<p>3.2 Սյունիքի մարզի 10 համայնքների կանանց և տղամարդկանց շրջանում կկազմակերպվեն բննարկումներ՝ ընտանեկան բռնության երևույթի Ընկալման և</p>	<p>Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՏԾ համակարգման վարչություն</p>	<p>Համայնքներ</p>	<p>Տարվա ընթացքում</p>

